



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առևտ նյութը առեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material










Տ Ա Ր Ա Վ Ա Ր

ՄԵՂՎԱՊԱՐԻ

ՈՒՂԵՑՈՒՅՑԸ

A $\frac{\pi}{23998}$

X



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՏԵՐԵՎԱՆ - 1929

**ՀՅԱԺՈՂԿՊՄԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ԼՈՒՅՍ Ե ՏԵՍԵԼ «ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ»-Ի**
ՀԵՏԽԵՑԱԾ ԳՐԱԴԱՐԱՆ

1. Աւգեցաւյց տնտառային աշխատավորի	50
2. Ս. Շաբաթն. —Մեր անելիքները (սպառված)	20
3. Հ. Փիրումյան և Մելքոնյան. —Խնչուշ ձեռնուու յի դոք- ծաբանում բազ և շվեց. պանիք պատրաստելը (սպառված)	3
4. Փիրումյան. —Խոստարայիները և նրանց մշտկության յե- ղանակները (սպառված)	16
5. Խ. Ավելարինյան. —ՀՄԽՀ Հողային Արենոգիբքը, բա- ցարարական հարց ու պատմականներով. մասն առաջին, աշխատա Հողագործակարծություն (սպառված)	30
6. Գ. Հերիմյան. —Թթնուած մշտկությունը (սպառված)	10
7. Գ. Հերիմյան. —Ենրամի վորդը, նրա կերտիքներն ու ինսումը	10
8. Խ. Յերիցյան. —Կաթոնառանեսության գործնական ձեռ- նարկ, մասն առաջին (24 նկ.) (սպառված)	1 ա. 50
9. Կ. Մելիք-Շահնազարյան. —Մխախութի մշտկությունը (բա- զառականացած)	20
10. Ս. Ֆրիգոլին. —Տառը պատզամ անանազահին	20
11. Խ. Յերիցյան. —Խելատակա՞ն, թէ՞ կոսդ. կաթետունու- սություն	10
12. Հ. Հարուրյան. —Բառը կ, կնքիք պայմանագիր (չս- փառու)	5
13. Ս. Բուլմանյան. —Ետքացանը և նրա նշանակութ.	15
14. Խ. Տեր-Ներսիսյան. —Խնչուշ մշտկուլ խաղաղի արդիները (28 նկարով) (սպառված)	35
15. Յերեսմենը գետի գյալը. —Խնչուշ կմառյան Յերկրային կո- միտեյի բանումները շառուղացիւնական հարցի մասին. Ս. Շա- ռամացի նախարանով (սպառված)	15
16. Հայոստանի կոմմնալիմստական Կաւակցության կենտրո- նական կոմիտեյի Չորրորդ Պլենումի բանահերը (սպառված)	15
17. Ռ. Արմենյան. —Խոշոր յեղինուրովով անասունների ժան- տանուու (սպառված)	15
18. Հ. Ազարյան. —Գյուղատնտեսական բանվորութ. և մի- ջազդ. կոմմունիկատուկան շարժումը (սպառված)	40
19. Կ. Խոն. Ալյան. —Շազեցույց արդյունավետ խոզաբուժու- թյան (սպառված)	15
20. Յերդինանդով. —Հավարուծ. և նրա պըստն. (սպառված)	20

Տ. ԱՍԼԱՆՅԱՆ

ՄԵԴՎԱՊԱՀԻ
ՈՒՂԵՑՈՒՅՑ ՑԱԼ

ՀՈՂՔՈՂԿՈՄԱՆ ՀՐԱՄԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ — 1929

Հայոց լեզվագիր տպ. պատ. № 66

Գրառեալ. № 2211 (բ) Տիրամ 2000

ՅԵՐԿՈՒԻ ԽՈՍՔ

Փաւտ ե վոր մեր նին մեղվապահներից շատերը կրթվել ու դաստիարակվել են ոռուսական մեղվաբուծական հարուստ գրականությամբ։ Հայերեն լեզվով յեղած գրականությունն ել վազուց սպառվել ե, ուստի յեվ մեր մեղվապահների մեծ տոկոսը զուրկ ե մնացել տեսական գիտելիքներից, յեվ հաճախ սխալների մեջ ընկնելով՝ իր աշխատանքը կատարել ե լսելով, փորձերով, կամ «ավանդությունների» վրա նիմնված։

Ամեն մի սիրող, սկսնակ յեվ նույնիսկ «փորձված» մեղվապահ կարու ե զրբի, ծեռնարկի յեվ խորհուրդների, մահավանուդ իրեն հասկանալի մայրենի լեզվով։

Մռուսական գրականությունը թեյեվ հարուստ ե յեվ բազմակողմանի, բայց յեվ այնպես նա լի կարող լիովին բավարարել Հայաստանում մեղվապահությամբ զբաղվողին։ Կովկասի աշխարհագրական դիրքը, բուսականությունն ու կլիմայական պայմանները, անգամ մեղուների բնավորությունն այնքան տարրեր են Մռուսաստանից, վոր ակամայից պահանջ ե զգացվում ունենալու տեղական պայմաններին համապատասխան սեփական գրականություն։

Տ. ԱՍԼԱՆՅԱՆ

Ա Բ Ա Զ Ա Բ Ա Ն

ՄԵԼՎԱՐՈՒԹՈՒԹՅԱՆ ՆՅԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆՐԱ ՈԳՏԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Մեղվարուծությունը գյուղասնակառության ոգտավետ ձյուղերից մեկն է : Մեղվարուծությամբ դրազվողը պետք է լավ ուսումնասիրի մեղսուների կյանքը , նրանց պահի շրջանակավոր փեթակներում և զործագրի մոմաթերթ ու մեղրահան մեքենա , զործր սիրի և աշխատանքները կատարի իր ժամանակին :

Մեղվարուծությունը , գյուղատնակառության մյուս ձյուղերի համեմատությամբ , իր խոչոր առավելություններն ունի . նախ՝ նա մեծ զրամազգություն չե պահանջում . բավական է մի քանի տասնյակ տուրի , վորաբեզի զործն սկսվի և հենց առաջին տարուց յեկամուս ստացվի . յերկրորդ՝ վորք թվով մեղուներ խնամնելու շատ ժամանակ չե պահանջում մեղվապահից . նա իր մյուս զործերի հետ միասին կարող է տանել նաև մեղվանոցի վերաբերյալ աշխատանքները :

Մեղուներից մենք ստանում ենք մեղք և մոմ : Մեղքը մարդու որդանիքի համար ողտավետ նյութ է , իսկ մոմը մեղրից ավելի թանկարժեք մթերք է , վորք զործադրվում և մեր տնտեսության մեջ : Յեթի մեղուն շլիներ , մենք կկորցնելինք ծաղիկների մեջ գրանվող միլիոնավոր փթերով նեկտարը : Մեղուներն են , վոր ոյց նեկտարը ժողովելով՝ մատչելի են դարձնում մարդուն : Բացի զրանից , մեղուները աշխատելով ծաղիկների վրա , նրանք ծաղկելի փոշին փոխազդում են ծաղկից ծաղիկ ու դրանով կատարած բույսերի բեղմնավորման ակտը , իսկ զրա հետեանքով ստացվում են պառազներ և սերմեր : Յեթե վերցնենք պապատու ծառի ծաղկած ձյուղերից մեկը և ծածկենք քողով այնպես , վոր մեղուների համար այն լինի անմատչելի—այդ ձյուղը կամ պառուզ չի տա , կամ կտան այն ծաղիկները , վորոնք բեղմնավորվել են պատահական կերպով : Փորձը ցույց է տվել , վոր այն այդիները , վորոնք մոտ են յեղել մեղվանոցներին , շարունակ առատ բերք են տվել , իսկ մեղվանոցների վերանալու դեպքում՝ նրանց բերքը պակասել է : Բերքատվածյան այդպիսի փոփոխումը այդետերերը վերաբերյալ մեղուների բացակայության , սկսել են այդիներում մեղուներ բազմացնել , վո-

բար և հաջողվել և նորից վերականգնել այդինքի առատ ըերքը :
Ցերք XIX դարում Յեվրոպայից առաջին անգամ սկսեցին Ավա-
տրայիս պազարու ծառեր փոխագրել, չնայած առատ ծաղկելուն,
նրանք քիչ պոտուզ եյին տալիս, վորից այդետերերը մեծ վր-
հասներ եյին կրում : Բայց յերբ այդտեղ սկսեցին մեղուներ տե-
ղափոխել, այդիների պազարերությունը զգալիորեն փոխվեց . այ-
դիներն սկսեցին առատ ըերք տալ : Նկատի ունենալով այդ հանգա-
մանքը, քաղաքակերթ յերկրներում սկսեցին այդիներում մեղու-
ներ պահել :

Փորձերն ու գիտողությունները ցույց են տալիս նաև, վոր վո-
րոշ բույսեր, ինպես, որինակ՝ առվույտը, կարնպանի վորոշ
տեսակները և այլն առատ սերմ են տալիս, յեթե դրանց գաշտերը
դժուար են մեղքանոցների մոտ : Այստեղից պարզ է, վոր պոտղա-
րուծությունն առանց մեղունրի չի կարող զարգանալ, նաև շատ
ըերք տալ չեն կարող բույսերի վորոշ տեսակներն այնուղ, վորոնց
մեղուներ չկան :

Մեր գյուղացին մեղուներ պահում և քթոցներում և շրջանա-
կավոր վեթակներում : Սակայն վերջիններում ել իր մեղուները նա-
խնամում և վո՞չ սացիսնալ ձեռվ, վարավհետեւ նա չի զործադրում
վոշ մեղքանան մեքենա և վոշ ել լրիվ մոմաթերթ, դրա համար ել
այդ ձեռվ պահվող անտեսություններից սաացվում և չնչին ար-
դյունք : Վորովեսի մեղքարուծությունը կանգնած լինի իր բարձ-
րության վրա, զրազվողներին հարկավոր և նախ՝ ձեռք ըերել
մեղքարուծական զիտելքներ և յերկրորդ՝ մեղուներին քթոցներից
փոխազրել շրջանակավոր վեթակներ և խնամել նրանց սացիսնալ
ձեռվ, հիմնված դիտության և փորձերի վրա :Ահա՛, այդ ժամանակու-
միայն մեղքարուծությունը մեզ կտա խոշոր արդյունք ու կզբաղի
դյուզատնտեսության մյուս ձյուղի մեջ իր արժանավոր տեղը :

I ԳԼՈՒԽ

ԿՈՎԿԱՍՅԱՆ ՄԵԴՈՒ

Մեղմարտական գրականության մեջ կովկասյան մեղուների ծագման մասին վոչքնչ չի հիշատակվում, սակայն հավանական է, վոր գրանք առաջ յեկած լինեն վայրի մեղուներից, վորոնց հիմայի կարելի յի հանդիպել անուանների խորքերում, ծառերի խոսուշներում և ժայռերի ձեղքերում:

Կովկասում կան յերկու տեսակ մեղուներ—վորչ (մոխրագոյն) և զեղին գույնի, վորոնք միմյանցից տարբերվում են թե՛ իրենց բնագործությամբ և թե՛ հատկությամբ: Հոշակվածը վորչագոյն մեղուն ե, վորն աչքի ե ընկնում իր խաղաղ բնագործությամբ և աշխատասիրությամբ: Բացի գրանից, նա ունի ավելի յերկար կնճիթ, քան մյուս մեղուները և կարողանում է նեկատը հավաքել այնպիսի բույսերից, ինչպիսին ե որինակ կարմիր առվույտը, վորից չեն կարողանում սպավել ուրիշ յերկրների մեղուներից շատերը: Կարմիր առվույտի ծաղիկների ծաղկերաժակները խոր ու յերկար են, վորի պատճառավ մյուս ցեղի մեղուներն իրենց կարձ կնճիթով չեն կարողանում հասնել նրանց խորքում զանված նեկտարին: Բացի գրանից, կովկասյան գորշագույն մեղուն տարածված լինելով Անդրկովկասի և Հյուսիսային կովկասի բարձրավանդականներում, ցրտին զիմացով ե: Մի քանի ուրիշ հատկություններ են ունի այդ մեղուն: Նրանց մայրերը չափազանց սրագավետ են և չափազար ձագ տվող: Վորչ մեղքի մաքուր տեսակը գտնվում է Սև ծովի մոտ—Արխաղիայում (Սուխումի շրջան) ու Մվանեթիոյում և կոչվում է «արխաղյան» մեղու:

Կովկասյան զեղին մեղուն տարածված և Հյուսիսային կովկասի զաշտավայրերում, Անդրկովկասում՝ Քուս, Արաքս և Իլիոն գետերի հովիտներում, նաև Կասպյան ծովափնյա շրջաններում: Այդ մեղքի վորովայնի առաջի յերեք սպակները նարնջագույն են, կուրծքը կիսալուսնի ձև ունի, գարձյալ նույն զույնի մայրերը նույնանման զույնի յեն, իսկ բոռերը՝ վորովայնի սղակների վրա ունեն զեղին բծեր: Այս տեսակի մեղուները ցրտի նկատմամբ ավելի զգայուն են, չար են, ուժեղ ձագատու և ավելի պակաս մեղքը տվող են, քան մոխրագույն մեղուները: Դեղին մեղքի

մաքուր տեսակը մնացել է Անքորանի դավառում, վորի անտանավ ել նա կոչվում է :

Կովկասյան այդ յերկու տեսակի մեզաները կարողանում են լավ պաշտպանել իրենց բունք հարձակումներից :

Կովկասյան մեզան իր արժանիքներով ու հատկություններով վագուց և դրավել մյուս յերկրների մեզվաղահների ուշադրությունը, այդ պատճառով ել կովկասյան մեզի ցեղը տարածելու նպատակով ամեն տարի մեծ քանակությամբ մայրեր են արտահանվում են . Առևսասատան, Ամերիկա և այլ յերկրներ :

II ԳԼՈՒԽ

ՄԵՂՈՒՆԵՐԻ ԿՅԱՆՔԸ

Մեղուներն առըսում են միասին և կազմում մեծ, կամ փոքր խմբեր, վորոնք կոչվում են ընտանիքներ :

Ամեն մի մեղքի ընտանիքում լինում է մի մայր, մի քանի տասնյակ հազար մեղուներ, իսկ ամառը բերքի և ձագի ժամանակ՝ նաև մի քանի հարյուր կամ հազար բռներ :

Ս Ա Յ Յ

Ծնոտանիքում մոր պարտականությունը միայն ձու ածելն է, վորը նա կատարում է ամեն որ, բացի ձեռնվագա մի քանի ամիսներից : Այն կարծիքը, վոր իր թև ընտանիքը կոտուվարում և մայրը, վորի համար եւ նրան կոչում են «թագուհի»—բորբոքին սխալ և, վորագիւնակ նրա կյանքը և դործունեցությունն յենթակա յև մեղուների կամքին : Ծնոտանիքում մայրը հանդիսանում է իր ցեղի շարունակողը և առանց մոր, մեղքի ընտանիքը զոյտ թյուն ունենալ չի կարող—նա կմօչչչանու :



Նկ. Ա 1.

ՄԱՅՐ մեղուներից և բռներից առբջևը վորը մեղքում և իր արտաքինով : Նա բռներից ավելի բարակ և ու ցերկար, արտաքուստ թվում է, թև մոր թերը մեղուների թերից ավելի կարճ են, բայց իրապես ալպապես չեն : Նրա վորիկն ու վորքերը գեղնագույն են, շարժումները՝ դանդաղ և սուհուն . իսկ ջաճիլ, չբեղմնավորված մայրերը՝ մեղուների նման արագաշարժ են: Մայրերն իբրեւ գովիկներ, ինչպես և կաթ ու մոմ արտադրող գեղձեր: Բայց այդ բոլորի փոխարեն մայրն ունի իբրկու խոշոր ձվարաններ, վորոնք լցված են լինում բազմաթիվ ձվիկներով:

Մայրը միշտ ըլջապատճառ է լինում մի խումբ մեղուներով, վորոնք ու շագրությամբ հետեւում են նրա բոլոր շարժումներին, վորպեսզի ժամանակին նրան հասցնեն այս կամ այն ողնությունը: Մորը նրանք կրակը լուսական են, խնամում և նրա կեղտոտությունները մաքրում :

Մայրը բջիջում ձուն գնում և հետեւյալ կերպ, նա զլուխը մացնում և բջիջի մեջ և մաքրուր լինուում դեպքում և բջիջի մայրից ու հետեւի վոտքերի շանդիկներով իջեցնում և փորիկը և

և զնում՝ սպիտակ յերկարածե ձվիկ, վորը մի ծայրով կրպչում և բլիժի հատակին՝ ուղղահայաց գիրքով: Վնասված շանգիկներ ունեցող մայրերը, չկարողանալով սմուր բռնել բջիջների ծայրերից, դադարում են ձու ածելուց:

Մայրն ընդունակ և որական ածելու յերկուսից-յերեք հապար և ավելի ձու: Ձվի քանակը կախված է մոր սպազարերությունից: Նրա տարիքից, տարվա ժամանակից, մեղքարերքից, ընտանիքի ուժից և բնի ծավալից: Գարնան սկզբին (վետրվարի վերջերին, կամ մարտի սկզբներին) մոր ածած ձվիկների քանակը լինում է քիչ, ասպա հետպհետե ավելանում է, նայած ընտանիքի պաշարին, ուժին և մեղքարերքին: Ամենամեծ քանակը լինում է մեղքարերքի ժամանակ և տաք յեղանակներին (յեթե միայն ունի բավական խնակությամբ զատարի բրդիջներ՝ ձու զնելու և մեղք տեղափորելու համար): Յերբ բնական րերքը բացակայում է, մեղքի պաշարն ել քիչ և լինում բնում, մոյրը սակավ և ձու ածում, կամ ձու զնելուց լուրսովին գաղարում է: Գիշամղոր բերքից հետո, մայրը ձվի քանակը սպակասեցնում է և սպասառի վերջերին բոլորսին զաղարում է ձու ածելուց մինչև հետեւյալ տարին, յեթե միայն աշնանային բերք չի լինում: Բացառությաններ կազմում են նույն տարիք ջահիլ մայրերը, վորոնք շարունակում են ձու ածել յերեմն սեպանմքեր ածում և ավելի ոչ:

Մայրերը յերկու տարեկան հասակում լինում են ամենասպազարիոր: Չորրորդ տարում նրանք ընդհանրապես ձու քիչ են ածում: Մայրկիսի մայրեր ունեցող ընտանիքները գանգազ են զարգանում: Առհասարակ յերեք տարեկանից ավելի հասակ ունեցող մայրերին չողիստի պահել:

Մայրերը, ինչպես և բանվոր մեղուները զուրս են զալիս (ծրնվում են) բեղմնավորված ձվիկներից, մեղուների ձագ տալու ժամանակ, նաև այն զեղքում, յերբ մեղուներն իրենց ծերացած մորը ապում են փոխարինել նորով, կամ յերբ մորից զրկվում են: Յեթե վերցնենք մեկ շրջանակ ձվիկներով ու զնենք մի այնպիսի ընտանիքի բնում, վորը մայր չունի, կտեսնենք, վոր ձվիկներից զուրս յեկած վորդերին մեղուներն ավելի առատ են կերակրում կաթունաման հյութով, քան մյուսներին: Բացի զբանից, այլպիսի վորդերի բջիջներին մեղուները մեծացնում են ի հաշիվ կողքի բջիջների և շինում են մայրարջիջներ, վորոնք արտաքինով նման են կաղնիի հատիկի և բնում են յերեք մեղքարջիջի տարածություն (նկ. 2): Մայրարջիջները կնքելուց հետո մեղուները զբանց կրկին ծած-



նկ. № 2.

ՄԱՅՐԱԲԸՆԵՐ

- ա) մայրաբչիչ ձեզ մոր
դուքս գալուց հետո.
- բ) կորպած մայրաբչիչ.
- շ) կըծած մայրաբչիչ.
- դ) մայրաբչիչ հիմքը.

Ցերք մայրը թիվից դուս և գալիս, նա փնտումէ մեղրով բաց
րէիջ, վորեց մի կաթիլ մեղր վերցնելով անցնում և, վրագեսզի
հանդիպի իրենից առաջ դուքս յիկած մայրերին: Այլտեղ արդեն
վորոշվում է ճակատագիրը: —Հաղթել՝ նշանակում և ընտանիքի
տերն ու անորենը զառնալ, կամ պարաւություն կրել և վոչնչանալ:
Այդ ժամանակ, յնթե լինում են մայրաբչիներ, մայրը կողքից
ծակում և այն (նկ. 2, դ), իսկ մեղրոները վոչնչացնելով մայրա-
բչիջը, մայրացուներին մաս-մաս անելով՝ դուքս և ձգում: Ցեն-
թագրում են, վոր մայրը թիվիչ կողքը ծակելուց հետո իր չհասու-
նացած քույրերին խայթում և, վորովհետեւ նրանց մարմնի վրա
նկատելի յեն լինում խայթոցի հետքեր:

կում են մոմով, վորը նմանվում է փոքրիկ և անկանոն թիվների: Նախ-
քան մոր դուքս գալը, մեղրուները 1-2
որ առաջ մայրաբչիջի ծալրերին կըպ-
ցրած մոմը հեռացնում են, թողնելով
միայն թիվի բարակ պատը:

Ցենթագրվում է, վոր զա արվում
և նրա համար, վորպեսզի մայրը կա-
րողանա հեշտությամբ կրծել մայրա-
բչիջի ծալրը և դուքս գալը: Բայց պա-
տահում են գեպքեր, յերբ մայրը հեշ-
տությամբ և դուքս գալիս մայրաբչի-
ջից՝ առանց վերեկի շերտի մաքրվե-
լուն: Մայրաբչիջից դուքս գալու ժա-
մանակ նա իր ծնոտների սուր ծալ-
րով կրծում է նրա ծալրը և բացում
մի նեղ անցք, առաջ շարունակում է
կարել այնպիս, վորից ստացվում է
շրջագիծ: Մայրաբչիջը շինված է լի-
նում այնպիսի մի կարծր նյութից,
վոր գեռ շրջագիծը չլրացած թասո-
կը գոնակի ձեռվ բացվում է:

Հաճախ պատահում է, վոր մայրը
դուքս գալուց հետո այդ ծածկոցն
ինքն իրեն փակվում է: Այդ հանգա-
մանքը անփորձ մեղվապահներին շտա-
տնգամ շփոթության մեջ և ձգում:

Ցերբեմն մայրն ուշադրություն չի գտնում մայրարջի ջների վրա և թողնում է, վոր մայրերը զուրս զան. իսկ հետո ընաանիքը կամ ձագ և տալիս, կամ թե մայրերի մեջ կոխվներ են տեղի ունենում և հաղթողը հանդիսանում է ավելի ուժեղն ու ձարպիկը. դրա համար ել, յերբ ջահիլ մայրը հանդիսում է չին բեղմավորված մորք, հաղթողը հանդիսանում է ջահիլ մայրը:

Եինում են գեղքեր, վոր միաժամանակ զուրս յեկած յերկու մայրերը միենույն փեթակում ապրում են հաշտ, և յեթե տարբն բարեհաջող է, իսկ ընտանիքն ուժեղ—այդ դրությունը վերջունում է ձագ տալով:

Սակայ չեն այնպիսի դեղքեր, յերբ միենույն փեթակում մայրն ու ազջիկն ապրում են միասին, միասին ել ձու յին ածում, համախ նույնիսկ միենույն շրջանակի վրա:

Մայրերը վարոշ հանգամանքներում ձայներ են արձակում, վոր կոչում է մայրերի յերպ: Այդ ձայները հնչում են հետեւյալ կերպ: «ծ-յու-յու-պ», «ծ-յու-յու-պ», «ծյուպ», «ծյուպ»: Այդ ձայները հաստակ են րջիկից զուրս զանվող ջահիլ բեղմանավորված, կամ շրեդմանավորված մայրերին: Յեթե մայրարջի ջներում կան մայրեր, ապա պատասխանում են նույն ձայնով. բայց ավելի խոռոչ ու ուրը նմանվում է կոկոսից: Նման ձայնակցություններ հաճախ լրսվում են ձագ տալու նախորյակին:

Ցեր մայրերն ամելի ուժեղ ձայն են հանում, մանավանդ, յերբ մեզուները նրանց շրջապատում են, իրենց կծիկի մեջ են տանում և թերեից ու վստաբերից քաշչում:

Մայրը րջիկից յեկնելուց հետո չի կարողանաւմ թուշել: Ծուրչիվ մեղուների խնամքի, նա 1-2 որից հետո ամբանում է և արդեն լինուանակ և լինում ձագի հետ զուրս զալու: Ծնկնելուց մի քանի որ հետո (բայց յերեք որից վոչ ուշ), յեթե յեղանակը բարեհաջող է, նա փեթակից զուրս և զալիս, մի քանի անգամ թոփչներ կատարում, վոր ճանաչի իր տեղը, վորից հետո զուրս և թուչում՝ բոսի հետ հանդիպելու և բեղմանավորվելու համար: Յեթե առաջին անգամ նրան չի հաջողվում բոսին հանդիպել, նա իր թոփչքը կրկնում է նաև հետագայում: Բեղմանավորվելուց հետո, յերբորդ կամ չորրորդ որր մայրը սկսում է ձու ածել: Սկզբնական շրջանում ջահիլ մոր ձու ածելն այնքան ել կանոնավոր չել լինում: Շատ թիջներ նա բաց և թողնում, մրտւներումն ել ածում յերկուական ձու. բայց վորոշ ժամանակից հետո այդ թերությունները վերանում են և նա սկսում է կանոնավոր ձու ածել: Մայրը մեղմավարջի ջներում և մայ-

բարձիչներում ածում և բեղմնավորված ձվիկներ, խոկ բոսարջիշ-ներում՝ չընդունավորված :

Յեթե մորն այս կամ այն պատճառով չի հաջողվում բեղմնա-վորվել, (3-ից մինչև 6 շարաթվար ընթացքում, հաշված իր ծնված որից), նու կորցնում և իր այդ ընդունակությունը և նրա ածած ձր-գիկները լինում են չընդունավորված, վորից և գուրս են զալիս մի-այն բառեր : Այդպիսի մայրերը կոչվում են բոռածու մայրեր : Նը-ման գեպքում մեղվարջիններից գուրս յեկած բառերը սովորականից ավելի փաքր են լինում :

Տեղմնավորված ծեր մայրերը նույնպես դառնում են բոռածու, բանի վոր բոսից սահացած սերմնահյութի պաշարը սպառված և լի-նում : Մինչեւ այդ հասակը նա այդ հյութով բաղմաթիվ ձվիկներ բեղմնավորած լինելու պատճառով այլիս հնաբավորություն . չի ունենում հնապալայում գոյացած ձվիկները բեղմնավորելու : Այդ-պիսի մայրերին ոկտի փոխարէնել ջահի բեղմնավորված մայ-րերով :

Մայրը կարող և առլրել մինչեւ 3 տարի, բայց հաճախ սաս-կում և 1-րդ տարում : Մայրերն ընդհանրապես վախիկու ևն լինում . յերբ վեթակը բաց են ածում, նրանք լույսոց վախչելով մանում են ավելի մութ տեղեւը, թաղնվում մեղուների տակ և այն :

Նրանք իրենց խայթը դործադրում են միմիայն ժրում մայրերի հետ կովելիս, խոկ մեղուներին և մարդուն նրանք չեն խայթում :

Սերը ընտանիքը պատառհարար զրկվում և մորից, կամ նրան զիտուվորալ կերպով մերժնում են և փեթակում մնում են միայն ձվիկներ ու վորդեր, մեղուներին ամիշշաղես սկսում են իրենց հա-մար մայր պատրաստել. այդպիսի մայրերը կոչվում են փրկարար մայրեր : Նրանք դուրս են գալիս 10-րդ կամ 11-րդ որը՝ Հին մոր կու ամից հետո : Համարիս որատառում և, վոր այդ ժամանակ մեղու-ներն ընտրում են մայրացու, 3 որականից ավելի հասակ ունեցող վորդերից : Վանի վոր այդ վորդերից գուրս յեկած մայրերը լինում են փոքր և քիչ ձու ածող, ուստի հարկավոր և յերկրորդ որը (մո-րեց զրկվելուց հետ), կտրտել բոլոր կնրիված մայրաբջիջները :

Յեթե ընտանիքը մորից զրկվում և և իր ընում չի ունենում վոչ ձվիկներ և վոչ ել մայրացու վորդեր, առա այդ ընտանիքի մե-ղուներից, յերկար անմայր մնալուց հետո, սկսում են ձու ածել. ածում են անկանոն, ամեն մեկ թիջում մի քանի հատ և թիջների պատերին կացրած . ձվիկները զնում են նույնիսկ ծաղկափոշով լիքը բջիջների մեջ : Այդպիսի ձվիկներից, վորպես չքեղմնավոր-ված, զուրս են զալիս բոռեր : Ընդհանրապես, այդպիսի ընտա-

Նիքաները բեղմնավորված մայրերին չեն ընդունում, ուստի անհրաժեշտ և լինում զանազան միջոցերով նրանց մայր տալ:

ԲԱՆՎՈՐ ՄԵՂՈՒ

Մեղվի ընտանիքը կազմված է բազմաթիվ անդարդացած և պատամներից, վորոնք կոչվում են բանվոր-մեղուներ: Դրանք կատարում են ընտանիքի բոլոր գործերը թե՛ փեթակում և թե՛ փեթակից գուրս:

Մեղուների կյանքն ու գործունեյությունը յենթակա յե բնության որինքներին: Մեղուն այս կամ այն գործը կատարում և վոչ



ըստ իր ցանկության կամ հրամանի, այլ համաձայն իր ֆիզիքական կարողության, վորը նրա մարմնի զարգացման շրջանում՝ միշտ լենթակա յի փոփոխման: Մեղուն կերակրում և վորդին այն ժամանակ, յերբ նրա գեղձերը զարգանում են ու կերակրալին հյութ արտադրում. նա մոմահացեր և պատրաստում, յերբ զարգացած են լինում:

Նկ. № 3

ԲԱՆՎՈՐ ՄԵՂՈՒ նրա մոմ արտադրող գեղձերը, դիմում են զրսի աշխատանքի, յերբ նրանց թեկութեալը լրիվ զարգացած են լինում: Այսպիսով, բանվոր մեղուները բնազդորեն կատարում են ընտանիքի բոլոր աշխատանքներն՝ ըստ իրենց կարողության և հասակի:

Մեղուն, յերբ բջիջից գուրս և գալիս՝ լինում և թույլ, բայց իրենց հասակավոր քույրերից սնունդ ստանալով՝ կազդուրվում և, ասպա յերկու որից հետո, ըստ իր ընդունակությունների, ոկրուում և կատարել փեթակի ներսի աշխատանքները: Վեց որ և յերբեմն ավելի, նա շարունակ մնում և փեթակում, վորից հետո զուրս և զալիս թոփքներ կատարելու վեթակի առաջ և մաքրվելու կղզանքներից: Հետապայում նա այդ թոփքների շրջանը ավելի ընդարձակելով՝ ուսումնասիրում իր փեթակի անդը: Առաջին 16 որը ջահիլ մեղուները կատարում են միմիայն փեթակի ներսի աշխատանքները: Նրանք կերակրում ու տաքացնում են վորդերին, նոր չեչեր շինում, հները՝ նորովում ու մտքրում, բջիջից-բջիջ մեղք են փոխադրում, իսկ բերքի ժամանակ—նոր բերածը ընդունում, մորը կերակրում, խնամում, փեթակը մաքրում կեղտերից ու մեղուների դիակներից, ողափոխություն կատարում և ընտանիքը պաշտպանում հարձակումներից և այլն:

Զահիլ մեղուները մորը կերակրում են իրենց գեղձերից արտադրող կաթնանման հյութով: Յերբ սկսվում և բերքը, բան-

վոր մեղսուները մորը կերակրում են առաս, վորի հետեանքայ մայրն ել սկսում է շատ ձու ածել: Բերքի նվազելուց մայրը պակ-սեցնում է ձվերի քանակը: Եշանակում է, մոր ցանկությու-նից չե կախված շատ թէ քիչ ձու ածելը, այլ մեղսուների կող-քից արվելիք կերակրի քանակից:

16 որից վոչ պակաս, հավանորին և ավելի հասակ ունե-ցող մեղսուները դիմում են՝ զրսի աշխատանքների: Դրանցից վո-ժանք հավաքում են նեկտար և ծաղկափոշի, մյուսները՝ բերում են ջուր, ակնամում:

Նեկտարը (ծաղիկների միջի քազցր հյութը) մեղսուներն ի-րենց կնճիթների միջոցով ծծելով՝ հավաքում են մեղրաստա-մաքսում և թափում բջիջի մեջ, ապա մի քանի անգամ բջիջից-բջիջ փոխագրելով նրա ջրային մասը գործընթացնում են, վորո հասունանալուց հետո գառնում և մեզը: Այդ մեզը նրանք տե-ղափորում են վորդով ըրջանակի վերելում, կամ նրա կողքերին, կամ թե տեղափախում ծայրերի ըրջանակները: Հասունացած մեզը նրանք սիրեկում են:

Մեղսուները ծաղկից-ծաղիկ թռչելով, փոշոավում են ծաղ-կափոշիով, ապա վոտքերի մաղիկներով մաքրելով այդ փոշին՝ հավաքում են իրենց հետեի վոտքերի կողովիկների մեջ ու ապա լցնում են բջիջները: Մաղկափոշին նրանք խառնում են ջրի ու մեզը հետ և զործաղրում վորդերի և իրենց սննդի համար; իսկ ջուրն ու ակնամումը բերելուց հետո անմիջապես ողտակոր-ծում են: Փամանակի ընթացքում այդ բջիջների ծաղկափոշի-ները գործաղրելով, մասամբ սպառվում, մասամբ ել մնում են բջիջներում: զրանց մի մասի վրա մեղսուները լցնում են մեզը և սիրեկում:

Ակնամումը ձյութ և, վորը մեղսուները հավաքում են ծառե-րի վոստերից և բերում իրենց կողովիկներով, կամ հենց իրենք արտաղրում այն ծաղկեփոշուց, վորից իրենց ստամոքսում վոր-դերի համար սնունդ են պատրաստում:

Մեղսուներն ակնամումով ուղղում են վեթակի անհարթու-թյուններն ու փոսերը, աշնանը փոքրացնում են արկանոցը՝ ցրտեց պաշտպանվելու համար, ամբացնում են նաև մոմահացերը և այլն:

Մեղսուները շատ են սիրում աղային ջրեր: Հաճախ այդ նր-պատակով նրանք մտնում են աղտոտ տեղեր, նստում անհասուն-ների միղախառն աղբերի վրա և այլն. վորպեսպի նրանք այլպի-սի աղտոտ տեղեր չայցելեն, հարկավոր և մեղվանոցում դնել թույլ աղաջուր: (Մի շիշ ջրին խառնել մի թեյի գդալ աղ):

Ներսում աշխատագ ջահիլ մեղուները զրսի աշխատողների ոման չար չեն լինում, չեն խայթում: Հավանորեն զրանց խայթոցը այնքան ել զարդացած չե: Դրա համար ել որվա տաք յեղանակին, մեղուների յեռուն աշխատանքի, ժամանակ, յերբ զրսում աշխատող հասակավոր մեղուները բացակայում են, փեթակը բացին ամելի անվտանգ ե: Մեղվաղահը հենց այդ ժամանակ ել պիտի կատարի իր աշխատանքները, վորապեսի թե՛ ինքը շխայթի և թե՛ վարդերը չժրսին: Վաս յեղանակներին՝ ցրտին, անձրեներին, յերբ զրսի աշխատող մեղուները փեթակում են լինում, առանց խայթվելու վանդի՛ հնարավոր չե: Մեղվաղահը անել:

Մեղուները սուր հիշողություն ունեն: Գարնանը դուրս դրնելուց և թսիչքներ կատարելուց հետո, նրանք կարողանում են շատ հիշել իրենց փեթակը, նրա գույնը, արկանոցի տեղը, և յեթե պատահմամբ արկանոցն իր տեղից շարժված լինի մի այլ կողմի վրա, զրսից յեկող մեղուներն իրենց թոփչքները դարձյալ կուղգնեն զեկող արկանոցի հին տեղը: Յեթե փեթակը անզափոխի մի նոր տեղ, մեղուները գուրս թոշելով աշխատանքի, կիմբարականն իրենց նախկին անդը և փեթակը նույն անզում ըլտնելով՝ կանհանգստան ու կակսեն վնասունել մասուկա տեղում: Զգանելու դեպքում՝ կցրին հարեան մինթակները:

Մեղուները բերք հայլաքելու համար թուզում են մինչեւ 3 վերսու: Յեթե այդ տարածության վրա բերք չեն դանում, նրանք զնում են ամելի հեռու՝ 4, նույնիսկ 5 վերսու: Նկատի ունենալով այդ հանգամանքը, նոր բերքի տեղ ընտրելիս մեղուներին պետք և պատաղել վաչ պակաս, քան 3 վերսու հետապորաթյան վրա, վորագեղի նրանք իրենց սովորած հին տեղը չվերադարձնան:

Մեղուներ դնելիս, յեթե նրանք գուրս դրվում են յեղել և իրենց տեղում թոփչքներ են կատարել ու աշխատել, պետք և տեղափոխել նույն հեռափորության վրա, այսինքն՝ վոչ պակաս, քան 3 վերսու:

Փեթակի արկանոցի մաս զիշեր ու յերեկ պահակ կանդնած մեղուներն ուրիշ ընտանիքի մեղուներին ներս չեն թողնում, նցանց ճանաչում են հասից, բայց յեթե սատր մեղուները լինում են մեղրով կամ ծաղկափոշով, այդպիսիներին թույլ են տալիս ներս մտնելու: Նկատի ունենալով այդ հանգամանքը, կարելի յեզանական գործողություններ կատարել մեղուների հետ, առանց նրանց վնասելու:

1. Յեթե հարկավոր և թույլ ընտանիքն ուժեղացնել ուրիշ, ուժեղ ընտանիքից դաշտ զնացող մեղուներով, պետք և բերքի ժամանակ, մեղուների ուժեղ աշխատանքի ժամին, այդ յերկու փեթակները տեղափոխել՝ մեկը մյուսի տեղը դնելով։

2. Կամ՝ յեթե պետք և մի ընտանիք ուժեղացնել մեղուներով, ապա վերջիններին կերակրում են և վրաները չաքարաջուր փչելով թողնում են փեթակ։

Մեղուները չափազանց անձնվեր են գեղի իրենց մայրը, ընտանիքը և ապագա սերունդը՝ վորդը։ Նրանց սերը գեղի մայրը նույն և, ինչ վոր յերեխաններին՝ գեղի իրենց մայրը։

Փեթակը բանալուց ու մորը գիտելուց կարելի յէ նկատել, թե ինչպես մեղուները չըջապատելով մորը, իրենց կնճիթներով կերակուր են տալիս և իրենց բեկիներով փաղաքչում նրան։ Յերբ մեղուներն իրենց մորը կորցնում են՝ սասաթիկ տիրում են, նրանց տրամադրությունն ընկուռմ և, աշխատանքը թուլանում և և գանդապում։ Արտաքուստ անդամ կարելի յէ նկատել, թե ինչպես մեղուները շփոթված ու հուսահատ արկանոցի շուրջն են պատում և իրենց մորը վորոնում։ Փեթակը բաց անելիս մի կողմից լսվում և նրանց աղիքողորմ բզզոցը, մյուս կողմից՝ թեերի դանդաղ շարժումների ձայնը։ Հանգստանում են, յերբ սկսում են մայրարջիթներ շինել։ Վորրացած ընտանիքները չեն կարողանում իրենց բունը պաշտպանել հարձակումներից։ Հաճախ յինթարկում են թալանի ու վոչնչանում են։

Զափազանց ուժեղ և արտահայտվում մեղուների սերը նաև դեղի վորդը։ Նրանք շարունակ գլուխները կոխում են բջիջների մեջ, վոր ահսնեն՝ թե այս կամ այն վորդն արդյոք սննդի պահանջ զգո՞ւմ և։ Հարկ յեղած գեղքում խկույն նրանց մատակարարում են առատ կերակուր։ Յերբեք չի պատահել, վոր ընտանիքը թողնի վորդն ու բնից հեռանա։ դրա համար ել ձագերին ձվիկներով վորդ են տալիս, վոր նրանք մնան իրենց բնակեցրած փեթակում։

Յերբ մեղուները մտազրվում են ձագ տալու, նրանք մայրարջիթներ են շնում, ուր մայրը ձու յէ դնում և հենց առաջին մայրարջիթը կնքելուց հետո, լավ յեղանակին, մեղուների մի մասի հետ հեռանում ե։ Ձագը իջնում և մեղքանոցի մոտ մի տեղ, ապա հետախույզ-մեղուների ուղեկցությամբ անցնում և նրանց ընտրած տեղը։ Մեղուներից և կախված հետազա ձագեր տալը։

Յեթե մեզուներն առաջին ձագից հետո մտադրություն չեն ունենում այլ ևս ձագ տալու, այն ժամանակ ջահիլ մորք թույլ են տալիս. կրծերու ժայրաբջիջները և մեղնելու նրանց մեջ զանգված իր քույրերին, իսկ հակառակ գեղքում՝ թողնում են, վոր նա նոր ձագի հետ հեռանա: Յերկրորդ ձագ տալու իբրարանցման ժամանակ, ժայրաբջիջներից զուրս են զայխս մի քանի ջահիլ ժայրեր ու խառնվում զուրս յեկող ձագի հետ. նույնն է կատարվում նաև հետագա ձագեր տալու գեղքում: Մեղուների ձագ տալու մտադրության գեղքում առաջին ձագից հետո ժայրաբջիջից զուրս և զայխս ջահիլ ժայրը. մյուս հասունացած ժայրերն այդ ժամանակ զանգված են ժայրաբջիջներում՝ մեղուների խիստ հսկողության տակ: Յեթե այդ բանտարկված ժայրերից մեկին մի կերպ հաջողվում ե զուրս զալ, յերբ մեծ քույրը զեռ զանգվում է փեթակում, մեղուները նրան խսկույն սպանում են:

Մեղուների կյանքն ամառվա ընթացքում շատ կարծ է տեղում: Նրանք ապրում են 1-2 ամիս: Նկատված է, վոր զարնունը զուրս յեկած մեղուները չեն հասնում մինչեւ աշուն, իսկ ձմեռնոնց մտնում են այն մեղուները, վորոնք զուրս են յեկել ամառվա վերջին. այդ մեղուները ապրում են մի քանի ամիս: Կարելի յե հաստատապես տաել, վոր վոչ մի բանվոր-մեղու չի ապրում մինչեւ մի տարի: Չնայած, վոր բնորդանբազես մեղդի կյանքը կարծ է, բայց բնանիքները, վորձված մեղքապահների ձեռ-



Նկ. № 4.

Բ Ո Ռ

քի տակ, բարեհաջող պարմաններում, ապրում են տամնակ տարիների: Ինարկե, անհատ մեղուները վոչնչանում են, բայց նըրանց հաջորդում են նոր սերունդներ:

Բուերն արու ԹԱՌ մեղուներն են, նրանք մյուս մեղուներից ավելի խոշոր են, իսկ մորից՝ կարծ: Բուերը վիթթակում յերեսում են ձագի շրջանից առաջ՝ մայխսին, հունիսին և յերբեմն ավելի շուտ կամ ուշ, նայած յեղանակներին, ընտանիքի ուժին և տեղի բարձրության: Մեղքաբերքը վերջանալուց հետո, մեղուները նրանց վիթթակից զուրս են անում. այդ պատճառով նրանք քաղցից կոտորվում են:

Բուերը չեն աշխատում, այլ ապրում են մեղուների հաջին: Նրանք ինքնապաշտպանության համար խայթ չունեն, վոչ հետեւի վլուքերին կողովիկներ՝ ծաղկեփոշի փոխադրելու համար և վուշ

մասմ արտադրող գեղձեր : Նրանց կնծիթերը կարճ են և միանկառայն անպետք՝ ծաղկիներից մեզը հալաքելու համար : Այդպիսով, չորհիվ իրենց մարմնի կազմվածքի, բոսերը չեն կարող ողնության ցույց տալ մեղուներին : Նրանց դեր միայն ջահիլ մայրերին բեղմնավորեցն է : Այդ նպատակով նրանք լավ յեղանակին փեթակներից դուրս են թուշում զրունելու և մայրերին հանդիպելու : Ենք ջահիլ մայրը դուրս և զալիս բեղմնավորվելու, բոսերը վարչակի կերպով զգալով նրա հոար՝ հետեւմ են նրան : Բազմաթիվ հետեղ բոսերից միայն ավելի ուժեղ և ճարպիկին և հաջողակամ աղի մեջ, թոշելու ժամանակ, զուզավորվել մոր հետ, վարից հետո այդ բոսը կաթվածաւար ընկնում և գետին՝ իր բեղմնավորման զրծարանը թողնելով մոր սեռական զործարանում : Մայրը վերադառնում և տուն՝ իր վորովայնի ծայրին ունենալով բեղմնավորման նշանը :

Մորը բեղմնավորելու համար հարկավոր և միայն մի բոս : Սակայն, վորպեսզի բեղմնավորումն ապահոված լինի, մեղուները ընազդորեն դուրս են բերում մեծ թվով բոսեր :

Ենք մայր ունեցող ընտանիքներում բոսեր ավելի շատ են լինում, քան ջահիլ հայր ունեցող ընտանիքներում :

Դիտական վարձերը ցույց են ավել, վոր 1000 հատ բոսը սրական զրծարգում և 100 կիլոգրամ մեզը : Իսկ 3—4 հազարը մոտ 400 կիլոգ ., նշանակում և 2 ամսովա ընթացքում նրանք կործադրեն մոտավորապես 240 կիլոգ . մեզը, չհաշված այն կերը, վոր մեղուները տալիս են բոսերի վորզերին : Այսուղից պարզ է, վոր հոգատար մեղվազահը չպիտի թույլ տա, վոր այդքան մեծ քանակությամբ բոսներ դուրս կան : Դրա համար անհրաժեշտ են բնում դնել մեղվարչիներով մոմահացեր, կամ ամրազջ մոմաթերթերով չըջանակներ, իսկ բոսարջիխներով մոմահացերը դնել վերի հարկերում : Դիտավոր բերքի ժամանակ մեղուները դրանց կլցնեն մեղրով :

Ենքից հետո, բարեհաջող ընտանիքներում, բոսեր չեն լինում : Բոսերը մնում են և չեն հալածվում այնպիսի բնատանիքներում, վորտեղ մայրը դեռ բեղմնավորված չե, կամ բնատանիքը մայր չունի :

ԲԱՆՎՈՐ ՄԵՂՎԻ, ԲՈՌԻ ՅԵՎ ՄՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Մեղվի յերեք ահսակներն ել դուրս են զալիս ձվիկներից : Առաջին սրը նոր ձվիկը համարյա ուզգահայսց կպած և լինում

թջիջի հատակին՝ սոսինձանյութով, յերկրորդ որը նա մի քիչ թեք-
վում է, իսկ յերրորդ որը՝ պառկում բջիջի հատակին: Այդ յերեք
օրվա ընթացքում ձվիկում կաղմակերպվում և մեղվի թրթուոր:
Յերրորդ օրվա վերջում ձվիկը պատռվում և և նրանից դուրս և
գալիս թրթուո-վորդը: Այդ վորդը կծկված պառկում և բջիջի
հատակին, մեջքը դարձրած զեպի նրա պատերը: Մեղուներն խո-
կույն հավաքում են ձվիկի կծեպները և սկսում վորդերին խնամել:
Յուրաքանչյուր տեսակ մեղվի վորդ պահանջում և տարրեր ժամա-
նուկ և առանձին խնամք:

Բանվոր-մեղվի վորդը յերեք որ սնվում և դյուրամարս կաթ-
նանման հյութով, վորն արտադրվում և յերիտասարդ մեղուների
գեղձերից դրանից հետո 3 որ եւ նա կերակրվում և խյուսով: Կյու-
որ բաղկացած և կաթից, մեղրից, ծաղկափշուց և ջրից: Յոթե-
րորդ որն այդ վորդի բջիջը մեղուները սիրեկում են:

Վորդերի սիրեկները մեղուները շինում են մոմից, ծաղկափո-
շուց ու ակնամոմից, և վորպեսզի վորդի չնշանու-
թյան համար ողը հեշտությամբ անցնի բջիջի մեջ, սիրեկները շին-
ուում են մի փոքր ուսուցիկ: Քանի վոր սիրեկները շինելու ժամա-
նակ սկսում են բջիջի ծայրերից և մոտենում կենտրոնին, հաճախ
դրանց մեջ պատահում են սիրեկը շվերջացրած բջիջներ, վորոնց
կենտրոնում ծակեր են լինում: Այդ ծակերից յերեսում են սպիտակ
վորդերը, վորոնց սիրեկներն երենց զույնով նմանում են հարեան
բջիջների սիրեկներին: Այդպիսի սիրեկները պիտի տարբերել վր-
տահիտով չիվանդ վորդերի սիրեկներից, վորոնք թիե նույնութեա-
ունեն ծակութիւններ, բայց նրանց սիրեկների արտաքին տեսքը և
նրանց մեջ յեղած վորդերը լինում են տարրեր:

Վորդը սիրեկի տակ կտանիում և 12 որ. իսկ մոր ձու զնելուց $20\frac{1}{2}$
կամ 21 որ անց զուրս և գալիս արդեն չափահաս միջատը:

Բոսի թրթուոր նույնպես սնվում և 3 որ նույնանման կաթով,
հետո $3\frac{1}{2}$ որ խյուսով և $6\frac{1}{2}$ որից հետո սիրեկլում և սիրեկած մը-
նում 14 որ. նշանակում և՝ բոոր զուրս և զալիս ձուն ածելուց $23\frac{1}{2}$
կամ 24 որից հետո :

Մոր թրթուոր սնվում և ավելի տատ ու խնամքով. նա չարունակ
ստանում և միմիայն կաթ. 6-րդ որը մայրացու վորդին մեղուները
սիրեկում են: Այդպես նա մնում և $8\frac{1}{2}$ որ: Զու զնելու որից հաշ-
ված, մայրը գուրս և գալիս $16\frac{1}{2}$ կամ 17-րդ որը:

ՄԵՂՈՒՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱԾԽԱՏԱՆՔԸ

Մեղուների բունը բաղկացած է չեչերից : Զեչերը մեծ մասամբ շինում են ջահիլ մեղուները : Նրանք ներս ընդունած կերակրից և փորիկի ծալքերից արտադրում են փոքրիկ թեփուկների նման մոմաթերթիկներ : Բերք լինելու գեպօւմ , մեղուների պատրաստած չեչերը լինում են սպիտակ , իսկ վորդով զբաղեցնելուց ու յերկար փեթակում մնալուց հետո , նրանց գույնը փոխվում է . նախ՝ զեղնում , հետո մուգ գույն ստանում , ապա մի քանի տարի մնալուց հետո՝ սեանում են :

Հետազոտություններն ու փորձերը ցույց են տվել , վոր մի փունտ մոմ պատրաստելու համար մեղուները գործադրում են Յ0-ից 80 կիլոգ . մեղք և մոտավորապես այդքան ել ծաղկափոշի : Պարզ է , վոր յերենք ձեռնոտու չե մեղուներին հարկադրել , վոր նրանք բնական մամահացեր պատրաստեն : Բացիսնալ տնտեսություններում մեղուներին արվում ե արհեստական մոմաթերթ , վորը պատրաստվում է հատուկ մեքենայով . (այլ մեքենան կոչվում է գլաններ) : Բերքի սակագ կամ բոլորովին շլինելու գեպօւմ , մեղուները չե չ ընդուրաստում , այլ ոգավում են շրջանակների վրա կամ փեթակի պատերին կպած հին մոմից :

Մեղուները չեչը սկսում են շինել փեթակի առաստաղից , իսկ շրջանակավոր փեթակում՝ նրա շրջանակների վերեկ ձողերից : Զեչերը պատրաստելու գեպօւմ , մեղուներն իրենց շանդիկներով իրար են կցվում ու կախվում չղթայածե : Նրանց այլպիսի ձև ընդունելու հպատակն այն է , վոր նախ՝ հեշտ լինի մոմի թերթիկները մեկը մյուսին ատալը և յերկրորդ՝ այդ զրությամբ նրանք հեշտությամբ են բարձրացնում չերմության աստիճանը , վորն անհրաժեշտ է թե՛ մոմի արտադրության և թե՛ նրա գործադրության համար : Շղթայի ծայրին գտնված մեղուները մոմի թերթիկները զուրս են հանում ու տալիս իրենցից վերեսում գտնվողներին , սրանք իրենց հերթին տալիս են հետեւյալներին և այլն , մինչդեռ վոր հասնում է վերեսում չեչեր . կառուցողներին : Վերջինները մոմաթերթիկները ընդունելով , ծամում են , ապա ծնոտների և առաջին վոտքերի ոգնությամբ կրացնում հարկագոր տեղերին :

Չեչերը շինելու ժամանակ , մեղուները կախված դերքով , իրենց ծանրությամբ չեչերին տալիս են ուղղաձիգ ձեւ . զրա համար ել վերթակները պետք ե հարթաշափով դնել , վորպիսղի չեչերը ուղիղ դուրս գան :

Մոմահացերը բազկացած են յերկու շարքեց—մեկը մյուսին կողած թջիջներից, վորոնց հատակները հանդիպում են իրար, իսկ անցքերը լինում են մեկը—մյուսին հակադիր և իրենց պատերով աղղոթած գեպի վեր, վորպեսզի միջի մեզրը չթափիլի:

Բջիջները լինում են վեցանկյունանի. լինում են նաև հինգ անկյունանի, իսկ վորոշ գեպքերում՝ նաև կլոր: Վեց անկյունանի թջիջները լինում են յերկու տեսակ—մանր և մեծ: Մանրերի թիվը վեթակում շատ է. գրանցեց գուրու և դադիս բանիք մեզրը գունդեր, ուստի և կոչվում են մեղքարջիջներ: Մեծ թջիջներն ավելի քիչ են. զրանք եւ կոչվում են բոռարջիջներ, վորպհետեւ արտազրում են միայն բոռեր: Կլոր թջիջները ծառայում են մայրեր հանելու համար և կոչվում են մայրարջիջներ:

Մեղուները, վորոշ գեպքերում, մեղքարջիջները վախում և զարձնում են մայրարջիջներ: Այդ պատահում և այն զեպքում, յերբ նրանք հանկարծ զրկվում են մորից և պատրաստի մայրարջիջներ չեն բնակում. ուստի ընտրում են վորեւ մեղքի թրիվու, կամ յերեմն բերդավարքած ձու և զրա չուրջը մեծացնում են մեղքարջիջը, հասցնելով նրան մայրարջիջի մեծության և հետո սկսում են վորպին կերպերել: Այդպիսի մայրարջիջը կոչվում և վրկության մայրաքիջի:

Մեղքարջիջները չիներաց հետո, յերբ մեղուները ուզում են անցնել բոռարջիջներ չինելու, նրանք հարկադրված են լինում չինել հինգ կամ վեց անկյունանի անկանոն թջիջներ, վորովհետեւ միանդից չեն կարողանում փոքր թջիջներից անցնել խաչոր բըջիջներին: Այդպիսի բջիջները կոչվում են անցողականի:

Մեղուները բուրու թջիջները լցնում են մեղքով, բացի մայրարջիջներից: Մաղկափուշու համար զրադեցնում են մեղքարջիջները, իսկ հաղիադույս գեպքերում՝ բոռարջիջներն ու անցողական թջիջները:

Բոռարջիջների սիրեկներն ավելի յեն գուրս բնկած քան մեղքարջիջներինը: Մեղքով լցրած հացերի թջիջների սիրեկները լինում են հարթ: Նրանք պատրաստվում են միժիայն մոմից, առանց ծաղկափուշու և ակնամոմի խառնուրդի:

Յերը մեղքարջիջներն ունեն գուրս ընկած սիրեկներ—դա նշանակում է, վոր այդ թջիջների վորպերը բոռեր են:

Մոմահացերի հաստառությունը մոտավորապես 2 ¼ սանտիմետր է, իսկ շրջանակավոր փեթակում վերնահարկի մեղքահացերն ավելի հաստ էն՝ մոտ 40 միլիմետր: Մոմահացերը

բնում շինվում են մեկը-մյուսին զուգահեռ, դրանց միջի տարածությունը մոտ 10 միլիոներ է :

Յեթև մոմահացերը զասավորված են այնպես, վոր իրենց կողերով նայում են դեպի արկանոցը, այդպիսի բունը կոչվում ե ցուրտ բուն, իսկ յերեսները դեպի արկանոցն ուղղվածները՝ տաք : Ցուրտ բունը տաք բնից ավելի դերազասելի յի, վորովհետեւ դրսի թարմ ողբ արկանոցով ազատ անցնում ե բունը, իսկ ներսի փըշացած ողբ նույնագեն ազատ գուրս և զալիս : Բացի զբանից, մեզուները թե՛ ողափախությունը և թե՛ բնի մաքրելն ավելի հետք են կատարում : Տաք բնում մոմահացերի զասավորման ձևը արգելք և հանդիսանում ազատ ողափոխության և մաքրության :

Մեղքի բունը Դադանի ձեզի փեթակում զասավորված և հետեւյալ ձեզով : Ամասոր կենտրոնական շրջանակներում՝ արկանոցի զիմաց լինում և վորդ, իսկ շրջանակների վերին մասերում, վորդի զլիին՝ մեզը : Աշնանը, յերբ վորդը գուրս և զալիս, վորդի տեղը մնում և զատարկ, իսկ ձմեռը գրանց վրա տեղափորվում և մեղքի կծիկը : Մեղքը լինում և նաև փեթակի կողքերի շրջանակներում, իսկ մեղքի կծիկի մոտ՝ մեկ կամ յերկու շրջանակ-ծաղկափոշիով :

III ԳԼՈՒԽ
ՄԵՂԱՆՈՑԱՅԻՆ ԻՆՎԵՆՏԱՐ
ՓԵԹԱԿՆԵՐ

Շրջանակավոր փեթակներից ամենատարածվածը—Դագան-բլատափ փեթակն է: Այդ փեթակը, նայած տեղի պայմաններին, շինվում է 10 կամ 12 շրջանակավոր: Ամերիկայում մեծ ժամանք՝ զործ են ածում թուտի փեթակը՝ լանդստրուտի շրջանակներին: Դրա վերնահարկի շրջանակները հավասար են բնի շրջանակներին, վարով ստեղծվում են մեծ հարմարություն՝ շրջանակները մեկ հարկից մյուսը տեղափոխելու համար:

Փեթակները պատրաստելու համար ամենալավ նյութը համարվում է յեղենու և լորենու տախտակը ¾ վերշոկ հասությամբ: Թեեւ շատերը գործազրում են ավելի հասաւ տախտակ, բայց դա այնքան ել գործնական չէ, վորովհեեւ թե՛ փեթակն է ծանրանում և թե՛ արժեքը թանկանում: Փեթակները շինելու ժամանակ պիտի նկատի ունենալ յերկու անջրաժեշտ պայման: Նախ՝ փայտը պետք է լինի չոր և յերկրորդ՝ փեթակների մասերը պիտի լինեն ձիշտ և միենանույն չափի, վորովհեղի մի փեթակի մասերը—բանը, հատակը, տանիքը և շրջանակները հեշտությամբ գան մյուսներին և ընդհակառակը: Այդպիսի փեթակներ կարելի յեւ շինել միայն մեքենաների միջոցով:


12 ՇՐՋԱՆԱԿԱՆՈՑ ԴԱԴԱՆ-ԲԼԱՍՏԻ ՓԵԹԱԿ

Դադան—Բլատափ փեթակը բաղկացած է . 1. հատակից, 2. բնից, վոր գրվում է հատակի վրա, 3. վերնահարկից, վոր գործ և ածվում գլխավոր բերքի ժամանակ, 4. տանիքից և 5. շրջանակներից: Փեթակի (նկ. 5) մեջ գրվում են շրջանակներ և մեկ կամ յերկու տիփարներ: Շրջանակների վրա գցվում են երեկած կտավ, վրայից բարձ: Բունը շինվում է քառակուսի, այսինքն՝ բնի յերկայինությունն և լայնությունը պիտի իրար հավասար լինեն:

Ներսի չափը՝ 450×450 միլիմետր, իսկ բարձրությունը՝ 320 միլիմետր:

Առաջի և հետեւի պատերի վերեւում, ներսի կողմից, շինվում է $14\frac{1}{2}$ միլ. խորությամբ և $12\frac{1}{2}$ լայնությամբ հանվածքներ (ֆալց), վորոնց վրա յել կախում են շրջանակները: Բացի առաջին պատից, մյուս պատերի ներքեւում ներսի կողմից շինում են հանվածքներ 10 միլ. լայնությամբ և 25 միլ. խորությամբ:

Յերբ վեթակի բունք դրվում և հաստակի վրա, նրա յեղբները ժանում են յերեք պատերի հանգածքների մեջ:



Նկ. № 5.

ԴԱԴԱՆ-FLUSSԻ ՓԵԹԱԿ

Արկանոցը շինում են տուաջի պատի ներքեռում՝ 220—240 միլ. յոյշությամբ և 8 միլ. բարձրությամբ:

Հաստակը բաղկացած է $465 \times 250^{\circ}$ միլ. հորիզոնական մակերեսութից և 465×250 միլ. թեքվածքից (առաջնատախտակ): Հաստակի տակ լինում և յերկու ձող 40×65 միլ. վոտքերի փոխարեն: Հաստակը շինվում ե բնի հաստության տախտակից:

Տիփարները գործ են ածում բունք փոքրացնելու համար ու չըջանակների պես զրվում են վեթակի մեջ, յերբ վեթակի բունք լցված չի շրջանակներով: Տիփարը շինում են 10—12 միլ. հաստություն ունեցող տախտակից: Նրա բարձրությունը հավասար է 308—310 միլ., այնպիս վոր նրա և հաստակի մեջտևում մնում է 10—12 միլ. բաց տարածություն, իսկ յայնությունը չըջանակների լայնությունից ավելի յէ՝ բնի տաքությունը պահպանելու համար:

Վերնահարկը ներսի կողմից բաղկացած է $450 \times 450 \times 167$ միլմետրից: Նա, բնի համապատասխան պատերում ունի նույն չափի հանգածքներ, վորոնց վրա հենվում են վերնահարկի չըջանակների ծայրերը:

*) ՓԵԹԱԿԸ պիտի ունենա 24—30 միլիմ. հաստություն:

Բնի շրջանակների չափը հետեւյալն է. բարձրությունը՝ զըս-
սից՝ 300 միլ., ներսից՝ 267½ միլիմ., լայնությունը՝ զըսից՝ 435
միլիմ., ներսից՝ 420 միլ., գերին ձողը՝ 472×25×17½ միլիմ.,
գորի ծայրի հանդածքները 26×10 միլ. ստորինը՝ 420×15×15
միլ., իսկ կողքի ձողերը՝ 297½×25×7½ միլ. կողքի ձողերը
տակի յերկու կողմից կտրվում ե թեք ուղղությամբ դեպի շրջա-
նակի ներսը, ծայրի բարձրությունը մինչև ներքին ձողը պետք է
լինի 5 միլ.:

Վերնահարկի շրջանակի բարձրությունն է. զըսից՝ 160 միլ.,
ներսից՝ 135 միլ., լայնությունը՝ զըսից՝ 435 միլ., ներսից՝ 420 մ.։
Վերին ձողը նույն է, ինչ բնի շրջանակի ձողը. ստորինը՝
420×25+7½ միլ. կողքի ձողերը՝ 152½×25×7½ միլ.։

Տանիքը շինվում է հարթ կամ թեք։ Հարթ տանիքը անպայ-
ման հարկավոր և ծածկել թիթեղով։ Ընդհանրապես, փեթակի տա-
նիքները պիտի շինել թեթե, վորպեսզի մեզուներին նայելու ժա-
մանակ գժվար շինի վերցնելը։ Դրաց, բնի չորս կողմից, պետք է
ամրացնել ձողեր, վորպեսզի տանիքը հաղցնելիս հենիքի այդ
ձողերի վրա։

Փեթակում դնում են 12 շրջանակ, մեկը՝ մյուսից 12 միլ.,
իսկ ծայրերի շրջանակները պատերից՝ 9 միլ. հեռավորությամբ։

Վերնահարկում դնում են 12 շրջանակ, իսկ յեթե ցանկանում
են ստանալ ավելի հաստ մեզզահացեր՝ դնում են 11 շրջանակ։

Տար շրջանականոց փեթակը շինում են նույն ձեւ, բայց տառ-
ջինից ավելի նեղ։ Եթա բնի լայնությունը ներսի կողմից 376 միլի-
մետր է։

ՈՒԻՏԻ ՓԵԹԱԿ

Ռուտի փեթակը Լանդուրոսի շրջանակով բաղկացած է յերկու
հավասար արկղներից, վորոնցից մեկը գործ և ածվում բնի տեղ,
իսկ մյուսը ծառայում է վորպես մեղքի շանմարան։ Այդ արկղնե-
րը հեշտությամբ կարելի է մեկը մյուսի տեղը դնել։

Արկղների ներսի չափը՝ —յերկարությունը՝ 462 միլ.

լայնությունը՝ 400 »

բարձրությունը՝ 240 » .

Լանդուրոսի շրջանակը դըսից —բարձրությունը՝ 232 »

լայնությունը՝ 446 »

հաստությունը՝ 27 » .

Ներսից —բարձրությունը՝ 204 »

լայնությունը՝ 431 » .

Արկղների մեջ տեղափորվում և տասական շրջանակ և մի հատ ել տիֆար : Հասակը յերկերեանի յի . մի կողմբ 9-ը . մյուսը՝ 22 միլ խորություն ունի : Ամառը զնում են 9 միլ . խորության վրա , իսկ ձմեռ՝ մյուս յերեսի վրա : Արկանացը շինում են ամբողջ պատի շահնությամբ : Վորովեսի մայրը շրաբքանա բունք , դանիման-յան ցանցով^o) բաժանվում են վերնահարկից :

ԱՌԱՍՏԱՂՆԵՐ, ՄԱԾԿՈՑՆԵՐ ՅԵՎ ԲԱՐՁԵՐ

Առաստաղների և բարձերի շնորհիվ պահպանվում և բնի տարբաթյանը . միաժամանակ բունը պաշտպանված և լինում չողից :

Փեթակների առաստաղները և ծածկոցները լինում են զանազան տեսակի — ներկած կամի , կլեյտնկա , մանր տախտակներ , կամ ամբողջ տախտակ :

Ամենուհարժարը — դա մանր տախտակներն են , վորոնք լինում են թվով 4 կամ 5 հատ 1/8 վերշոկ հասառությամբ և գրվում են բնի վրա՝ շրջանակների ուղղությամբ : Այդպիսի առաստաղը հեշտությամբ և մաքրվում մոմից և ակնամոմից : Նույնը չի կարելի առել ծածկոցների նկատմամբ : Տախտակներից շինված առաստաղը հարթաքանությամբ և նաև այն տեսակներից , վոր հնարավորություն և տայլիս բունը մաս-մաս բանակ , վորովիսի հարմարություն մեղ չի կարող տալ ամբողջ տախտակից շինված առաստաղը :

Զմեան այլ առաստաղները պետք և փոխարինել մաքուր քառթանով , վորովիսի բունը չխոնավանա :

Բարձեր .— Բարձերը քսակներ են , վորոնց մեջ լցնում են խոտ , չորացած տերեններ , դարման և այլն : Ենում են նաև 1 1/2 վերշոկ լայնության բարակ ձողերից բարձր , վորոնց յերկու յերեսը ծածկում են քաթանում , իսկ մեջը լցնում նույն նյութերից :

Ամենալավը — դարմանից հյուսած բարձերն են , յեթե նրանք շինված են մեկ վերշոկից վոչ պակաս հաստությամբ : Այդպիսի բարձերը , բունը տաք են պահում , ամառը պաշտպանում են չողից , իսկ ձմեռը մեղուների արտաշնչած — փշացած ողը հեշտությամբ և անցնում : Այդպիսի բարձերի նշանակությունը ձմեռով մեղուների համար մեծ է :

^o) Գանիմանյան ցանցով մեղուները կարողանում են անցնել , իսկ մայրերը և բոսերը՝ վոչ :


ՄԵՂԱԲՈՒԾԱԿԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՈՐԾԻՔՆԵՐ



Յերեսի քող — քողը գործադրվում և աշխատանքի ժամանակ՝ մեղուների խալթոցից պաշտպանվելու համար։ Փորձված մեղվապահները քող գործ են ածում յերբեմն յերբեմն, իսկ սկսնակներին անհրաժեշտ և միշտ ունենալ, ավելի հանգիստ և փոտահ աշխատելու համար։

Մխարար. — Մխարարն ամենաանհրաժեշտ գործիքներից մեկն և, զրանով ծուխ են տալիս մեղուներին, վորապեսզի նրանք աշխա-

տելու ժամանակ չխալթեն կան զանազան ձեի ծխարարներ, բայց ամենալավը համարվում է Ռուտի ծխարարը։ Մխարարի համար գործ են ածում հին կապերտի կտորներ, աթար, փտած փալտ և ալին։ Աթարը, կապերտի կտորանքն ունեն վորոշ պտկասություններ։ իսկ փտած փալտն ալիդ նպատակի համար ամենից զերազատելին եւ։



Նկ. № 7.

ՄԽԱՐԱՐ ԿԱՍ ՓՈՒՔՍ

Ռուտի յերիչ —

Մեղուները, սովորաբար, շրջանակները մոմով և ակնամոմով կպցնում են իրար և փեթակի հանվածքներին։



Նկ. № 8.
ՔԵՐԻԿ

րին։ Նայելու ժամանակ, վորապեսզի հնարավոր լինի շրջանակները բնից հանել, գործ են ածում զանազան ձեի գործիքներ, վորոնցից ամենից գործածականը՝ Ռուտի քերիչն եւ։

Քերիչի միջնորդ այդպիսի շրջանակները կարելի յե հեշտությամբ առանձնացնել և մաքրել։


Խոզանակ. — Հաճախ անհրաժեշտ և լինում այս կամ այն շրր-

Նկ. № 9
ԽՈԶԱՆԱԿ

ջանակը մեղուներից ազատել-
դրա համար մեղուներին ավե-
լում են խոզանակով։ Արդ նպա-
տակի համար լավ և նաև սագի
թեր թե խոզանակը և թե սագի
թեր գործ ածելուց առաջ պի-

տի թրչել։

Փոխադրական արկղ — Փոխադրական արկղը սովորաբար չինում
են Յ շրջանականոց և գոնակը թողնում վերելի մասում։ Առաջի
և հետեւ պատերի վերենում՝ սերսի կողմից չինում են հանվածքներ,
ձիշտ փեթակի ձեռվ, վորպեսողի շրջանակները կարելի լինի տե-
ղավորել։



Նկ. № 10.

ՓՈԽԱԴՐԱԿԱՆ ԱՐԿՂ

կամ մեղրահացերը փեթակից-փեթակ տեղափոխերու և կամ
հարկ յեղած դեպքում՝ ժամանակավոր բնից շրջանակները հեռա-
ցնելու համար և այլն։


Կերակրամաններ · — Մեղրի պակասության դեպքում հարկ և
լինում մեղուներին կերակրել շաքարաջրով՝ սուանձին կերակրա-
մաններում։ Կան զանազան տեսակի կերակրամաններ։ դրանցից
ամենապարզը և գործնականը՝ մեկ կամ միքանի կիլոանոց ապակյա-
րանկան և, վորը շաքարաջուր լցնելուց հետո՝ բերանը կապում են
թաց քաթանով և զնում զլիսիվայր՝ ծածկոցի տակ, շրջանակների
վրա։ Իսկ յեթե ծածկոցի փոխարեն փայտե առաստաղ և, ապա-
տակներից մեկը, վորը բնի կենտրոնին մոտ և, վերցնում են, կե-
րակրամանը դնում, հետո բաց տարածությունը ծածկում են շո-
րով։

Փոխադրական արկղը բաժան-
վում է յերկու հավասար մասի.
վերելի մասը բացվում-ծածկվում և:
Ամեն մի մասում տեղափորում են
վերնահարկի շրջանակներ։ Իսկ
յերբ ցանկանում են ալյունդ տե-
ղավորել միայն ներքին հարկի շրջ-
անակներ, վերելի մասը ծածկում
են։

Արդ արկղը մեղվանոցի համար
ամենաանհամենշտ ինվենտարից
մեկն և։

Փոխադրական արկղը գործ են
ածում մեղրահացերը քամելու,

տեղափոխերու կ կամ




Նկ. № 11.

ԴՈՒԼԵՏԸՆԻ ԿԵՐԱԿՐԱՎԱՆ


Հետո ներսից նրա բոլոր մեխած տեղերի վրա տաքացրած մոմ են ածում, վորպեսզի շաքարաջուրը չթափի: Շաքարաջրի յերեսին դցում են բարակ տախտակի կտոր, վոր մեղոնները շաքարաջրի մեջ չնկնեն ու չխեղդվեն:

Արհեստական մոմաբերք կայցնելու գործիքներ.—Մոմաթերթը շրջանակին կպցնելու համար հարկավոր և մետաղարքը,



Նկ. № 12.

ՀՈՐԽՈՒԱԿԱՆ ԶԵՎ



Նկ. № 13.

ՈՒՂՂԱՉԻԳ ԶԵՎ


րիզ, տախտակ, Ռուլյուկի զյան և Վուարլեյի խթան: Շրջանակի ձողերը հարկավոր տեղերում բզով ծակելուց հետո, անհրաժեշտ և անցկացնել մետաղարքը, վորպեսզի շրջանակին կպցը մոմաթերթը չձգվի և չթափի: Այն մոմահացերք, վորոնք չունեն մետաղալարեր, նրանք քամելիս, կամ տեղափոխելիս կտրապավում են և թափվում: Սովորաբար մետաղալարն անցենկացնում ուղղահայաց, հորիզոնական և զանազան ուղղությամբ: Ուղղահայացը՝ անցենկացնում հետեւյալ կերպ՝ շրջանակի վերեի ձողը բզով ծա-

